Վիճակագրական տեղեկութիւններ Սեւանայ մենաստանի այցելուների 1914 թ. յուլիս-օգոստոս ամիսներում.

Թէև մեծ դժուարութեամբ, սակայն մեզ յաջողուեց երկու ամսուայ ընթացքում Սևան յաճախողների ընդհանուր ցանկը կազմել։ Սա լինելով առաջին փորձը՝ անշուշտ, կունենայ իւր թերութիւնները։ Հնարաւորութիւն չունեցանք լիակատար ցուցակ կազմելու արգելարիթ հանգամանքների պատճառաւ. նախ՝ որ դժուարանում էինք ամեն մի այցելուին անուղղակի հարցերով զբաղեցնելու և երկրորդ՝ եկած հիւրերն էլ երկար ժամանակ չէին մնում, որպէսզի հնարաւորութիւն ունենայինք ծանօթանալով հանդերձ՝ մեզ հետաքրքրող տեղեկութիւնները հաւաքել։

Մեզ դժուարութեամբ էր յաջողում իւրաքանչիւր այցելուից իմանալ իր զբաղմունքը և ահա այդ է պատճառը, որ յաճախող հիւրերից 950 հոգուց (չհաշուած Վարդավառի և Վերափոխումն ս. Աստուածածնի տօներին եկած ուխտաւորներին) հազիւ միայն $^1/_3$ մասի զբաղմունքն ենք նշանակել, մանաւանդ որ մեծ ուխտերին բնաւ հնարաւորութիւն չկար լրիւ ցուցակ կազմելու։

Ստորև նշանակած աղիւսակից ընթերցողները կնկատեն, որ Սևանայ մենաստանը այցելուներ ունի ոչ թէ միայն իր շրջակայ գիւղերից, այլ և հեռու հիւսիսից՝ Պետրոգրադից, նոյն իսկ արտասահմանից, և այդ բազմամարդ այցելուներին կարելի է բաժանել երկու կարգի՝ զուտ ուխտաւորներ, որոնք գալիս են սոսկ աղօթելու և որոնց թիւը շատ են և երկրորդ, այսպէս ասած, գիտական նպատակով եկողներ, որոնք համեմատաբար նուազ տոկոս են կազմում։

Սևանայ մենաստանը հիւրընկալել է նաև այլազգիներին և բազմաթիւ ինտելլիգենտ անձանց, որոնք վանքից ստացել են ամեն տեսակի յարմարութիւններ։

Թող չափազանցութիւն չհամարուի, եթէ ասելու լի-

նենք, որ մեր վանքերից ոչ մէկը (չհաշուած ս. Էջմիածինը) այնչափ մեծ քանակութեամբ այցելուներ չունի, որչափ Սևանի վանքը. հարկաւ, այդ հանգամանքին նպաստում են Սևանի գեղեցիկ դիրքն ու պատմական նշանակութիւնը։

Եկող հիւրերին վանքն պատսպարում է և տալիս յարմարութիւններ, հարկ եղած դէպքում նաև անուն։

1. Ցուցակ ըստ տեղի եւ սեռի.*)

	Ո՞ր տեղացի են.	Ո՞ր տեղից եկած.	Արական.	Իգական.	Տղայ.	Աղջիկ.
1	Ապուլիսեցիք	Ապուլիսից	2	1	1	—
2	Ալէքսանդրոպոլցիք	Դիլիջանից	6	4	1	—
3	Բագուեցիք	Դիլիջանից	45	52	12	9
4	Բաթումցիք	Բաթումից	9	3	1	1
5	Գանձակեցիք	Դիլիջանից	17	4	3	1
6	Գեօքչայեցիք	Գեօքչայից	18	14	6	2
7	Դարաչիչակցիք	Դարաչիչակից	13	7	—	4
8	Դիլիջանցիք	Դիլիջանից	31	18	6	2
9	Ելենովկացիք	Ելենովկայից	3	—	—	—
10	Երևանցիք	Դարաչիչակից	35	10	4	6
11	Թիֆլիսեցիք	Դիլիջանից	40	17	2	8
12	Կիևցիք	Կիևից	13	4	—	—
13	Հին Նախիջևանցիք	Մոսկվայից	12	4	—	—
14	Նոր Նախիջևանցիք	Նոր Նախիջևանից	6	2	—	—
15	Նոր Բայազէտցիք	Նոր Բայազիտից	93	27	14	21
16	Շահրիսեցիք	Շահրիսից	13	9	4	2
17	Շամախեցիք	Դիլիջանից	18	6	4	1
18	Շուշեցիք	Դիլիջանից	32	11	6	4
19	Պետրոգրադցիք	Պետրոգրադից	7	3	—	—
20	Պոլսեցիք	Պոլսից	1	—	—	—
21	Ներք. Ախտայից	Ն. Ախտայից	11	3	2	4
22	Սարատովցիք	Սարատովից	6	2	—	—
23	Սեմիոնովկացիք	Սեմիոնովկայից	2	1	—	—

*) Սոյն հաշուի մէջ չեն մտնում մեծ ուխտերի՝ Վարդավառի եւ Վերափոխումն ս. Աստուածածնի՝ տօների առիթով եկած ուխտաւորների թիւը, որ կ՚ենթադրի շուրջ 2500-ի արական եւ իգական սեռը միասին հաշուած։

24	Սղնախեցիք	Սղնախից	6	2	—	—
25	Ցամաքաբերդցիք	Ցամաքաբերդից	17	4	3	1
26	Փաշաքանդցիք	Փաշաքանդից	18	4	2	7
27	Փարաքարցիք	Փարաքարից	31	17	6	8
28	Քանաքեռցիք	Քանաքեռից	23	14	8	9
29	Քութայիսցիք	Քութայիսից	3	1	—	—
			531	244	85	90

Ընդհանուր գումարն է 950 հոգի։

2. Ցուցակ ըստ ազգության.

Հայեր.	Թուրքեր	Վրացիք.	Թուրքեր.	Գերմանացիք.
907	28	9	3	3

3. Ցուցակ ըստ զբաղմունքի.

Ուսուցիչ ուսուցչուհի	Իրաւաբան	Բժիշկ	Վաճառական	Արհեստաւոր	Հոգեւորական	Ինժեներ	Նկարիչ	Աշակերտ-աշակերտուհի	Երկրագործ	Այլ և այլ զբաղ-մունք ունեցող
30	6	4	30	70	7	3	2	50	200	130

Անդամատան Սիւանայ

Եզնիկ աբեղայ